ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԽԱՆՁՐԱԾՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ

ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հետազոտական աշխատանք
2-րդ խումբ

Ղեկավար՝ մանկավարժական գիտությունները թեկնածու, դոցենտ **Ա.Գ. Ստեփանյան**

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... **Ошибка! Закладка не определена.**

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ 11

Բժշկական մոդել 11

Սոցիալական մոդել 12

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: . 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԱԽԱԲԱՆ

Ինչպես գիտենք աթլետիկան ներառում է մի շարք վարժություններից, որոնց կատարումը բարենպաստ ազդեցություն է թողնում մարդու օրգանիզմի վրա: Աթլետիկան անցնելով ժամանակի միջով թուլ է տալիս մարդուն մարզվել և մարզել օրգանիզմը հասնելով բարձր արդյունքների: Գրեթե բոլոր սպոտաձևերը բաղկացած են աթլետիկական վարժություններից կամ պարունակում են աթլետիկական դրվագներ:

Ներառական կրթությունը օգնում է այն անձանց, որոնք ունեն որոշակի սահմանափակումներ ինտեգրվել այնտեղ, որտեղ ի սկզբանե նրանց չեն կարողանում հարմարվել: Ներառական կրթությունը և կրթողի ճիշտ մոտեցումը կարող են մեծ հնարավորություններ ստեղծել բոլոր նրանց համար, ովքեր դրա կարիքը ունեն: Այս նյութը մեզ կօգնի հասկանալ թե ինչ է իրենից աթլետիկայում ներառական կրթության ինտեգրումը և ինչ ճանապարհներ կան այդ խնդիրները հաղթահարելու համար:

Ժամանակակից մոտեցումները և արդի համակարգերը թուլ են տալիս մարդկանց, որոնք ունեն որոշակի խնդիրներ հասնեն գրեթե նույն բարձունքների, ինչպես օրինակ օլիմպիական մարզիկները կամ աշխարհի լավագույն մրցում մասնացող մարզիկները:

Ներառական կրթությունը իրենից չի ներկայացնում միայն պարօլիմպիկ մարզաձևերի համար նախապատրաստման հարթակ, այլ հնարավորություն է ստեղծում նաև բոլոր նրանց համար, ովքեր զուրկ են եղել ժամանակի ընթացքում զբաղվել մասայական մարզաձևով, ինչպես նաև ստեղծում է հատուկ մեթոդներ և մշակում ճանապարհներ, որոնք թուլ են տալիս ավելի մոտ դարձնել ներառական խմբում ընդգրկված անձանց և աթլետիկան: Ներառական կրությունը աթլետիկա մարզաձևի հետ համատեղելու համար հարկավոր է հասկանալ թե ինչ է իրենից ներկայացնում արդի աթլետիկա մարզաձևը:[1]

Թեթև աթլետիկան ընդգրկում է վազքը, մարզական քայլքը, թռիչքները, նետումներն ու բազմամարտը: Թեթև աթլետիկայի գրեթե բոլոր ձևերի մրցումներն անցկացվում են մարզադաշտում: Վազքաձևերը (վազք և արգելավազք) անցկացվում են 400-մետրանոց վազքուղում: Տեխնիկական ձևերի (նետումներ և թռիչքներ) մրցումներն անցկացվում են վազքուղու ներսում գտնվող մարզահատվածներում: Վազքի, թռիչքների

և նետումների մրցություններ անցկացվում էին դեռևս Հին Եգիպտոսում և Ասորեստանում:

Վազքում և արգելավազքում ինչպես թեթև աթլետիկայի մյուս մրցաձևերը, անցկացվում են առանձին այդպիսով տղամարդիկ և կանայք մրցում են առանձին: Վազքատարածությունները լինում են կարճ կամ սպրինտերական (100, 200 և 400 մ), միջին (800 և 1500մ), երկար կամ ստայերական (5000 և 10.000մ) և մարաթոնյան (42 կմ 195 մ):

Կարճ տարածության վազքամրցումերում մարզիկները մեկնարկում են հատուկ մեկնարկային կոճղակներից, որոնք նրանց հնարավորություն են տալիս հրվել և արագ պոկվել տեղից: Մարզիկներից յուրաքանչյուրը վազում է իր մրցուղով: 100 մ վազքատարածությունում նրանք մեկնարկում են նույն գծից և վազում են ուղիղ գծով: 200 և 400 մ վազքատարածություններում մարզիկները մեկնարկում են վազքուղու ոլորանի տարբեր դիրքերից, սակայն բոլորն էլ պետք է անցնեն նույն տարածությունը: 800 մ վազքատարածությունում մարզիկներից յուրաքանչյուրը վազում է իր վազքուղով՝ միայն մինչև առաջին ոլորանը, որից հետո նրանք կարող են վազել ցանկացած վազքուղով: Ավելի երկար վազքատարածություններում (բացառությամբ՝ 4 x 400 մ փոխանցումավազքի) մարզիկները մեկնարկում են ոլորանից և վազում ցանկացած վազքուղով: Մեկից ավելի շրջանով վազքատարածություններում վերջին շրջանը կատարելիս վերջնագծի վրա հնչում է զանգի ձայնը:

Վազքի տեսակներից են նաև 4x100մ և 4x400մ տարածություններով փոխանցումավազքերը (էստաֆետ): Դրանց 4 մասնակիցներից յուրաքանչյուրը վազում է նույն վազքատարածությունը և ձեռքի փոխանցումափայտիկը հատուկ նշված գոտում փոխանցում է հաջորդ մասնակցին:

Երկար տարածության փոխանցումավազքի (4x400մ) մասնակիցները վազում են 1 շրջան և ոլորան, այնուհետև յուրաքանչյուր մասնակից վազում է իր վազքուղով:

Արգելավազքը ներառում է 2 տարածություն՝ 110 մ (կանանց համար՝ 100 մ) և 400 մ: Վերջին վազքատարածությունում արգելքները տեղադրված են աստիճանաձև՝ ընդհուպ մինչև վերջնագծային ուղիղը: Եթե մարզիկը վայր է գցում արգելքը, տուգանային միավոր չի ստանում:

Արգելավազքի կամ դրա տարատեսակ խոչընդոտավազքի (սթիփլչեյզ) բարձրակարգ մրցումներին մասնակցում են միայն տղամարդիկ:

Խոչընդոտավազքն անցկացվում է 3000 մ մրցատարածքում (7,5 շրջանից քիչ ավելի): Յուրաքանչյուր շրջանում բոլոր վազորդները հաղթահարում են 4 անշարժ արգելք և ջրափոս: Ընդ որում՝ այդ ժամանակ ջրափոսի առջևում դրված փոքրիկ արգելքից հարկավոր է այնպես թռչել, որպեսզի վայրէջքը կատարվի ջրափոսի ծանծաղ մասում:

Ամենաերկար տարածության վազքամրցումը մարաթոնյան վազքն է՝ 42 կմ 195 մ, որն անցկացվում է խճուղում: Խոշոր մրցումներում մարզիկները մեկնարկում և վերջնագիծը հատում են մարզադաշտում: Մրցատարածության ողջ երկայնքով մարզիկների համար տեղադրում են ջրի կետեր, որտեղ վազորդները կարող են խմել ջուր և այլ զովացուցիչ ըմպելիքներ:

Մարաթոնյան վազքի ամենախոշոր մրցումներին մասնակցում է մի քանի հազար մարդ: Այդպիսի զանգվածային մրցումներ անցկացվում են ամեն տարի աշխարհի բազմաթիվ քաղաքներում, որտեղ մասնակցում են և՛ պրոֆեսիոնալ մարզիկներ, և՛ սիրողներ:

Թեթև աթլետիկայի տեխնիկական ձևերն են 4-ական տեսակի թռիչքներն ու նետումները: Դրանք անցկացվում են վազքուղու ներսի հրապարակում հատուկ սարքավորված տեղամասերում: Բարձրացատկի և ձողացատկով մրցումներում մարզիկները ցատկելով անցնում են որոշակի բարձրությամբ դրված ձողի վրայով՝ առանց վայր գցելու այն. յուրաքանչյուր բարձրության համար ցատկորդին տրվում է 3 փորձ, եթե նա հաղթահարում է այդ բարձրությունը, ապա շարունակում է մրցապայքարը, իսկ եթե բոլոր 3 մրցափորձերը վերջանում են անհաջողությամբ, ցատկորդը դուրս է մնում հետագա մրցապայքարից: Հաղթում է ամենամեծ բարձրությունը հաղթահարած մարզիկը:[2]

Հեռացատկի, եռացատկի, գնդի հրման, սկավառակի, մուրճի և նիզակի նետման մրցումներում մարզիկին տրվում է մի քանի մրցափորձ:

Թեթևաթլետիկական բազմամարտը՝ տասնամարտն ու յոթնամարտը, մարզիկի բազմակողմանի ընդունակությունների ստուգման մարզաձևեր են: Մրցումներն

անցկացվում են 2 օրում: Մարզիկները միավորներ են հավաքում յուրաքանչյուր մարզաձևից առանձին-առանձին:

Տղամարդ բազմամարտիկները մրցում են տասնամարտում: Առաջին օրը մրցում են 5 ձևում՝ 100մ վազք, հեռացատկ, գնդի հրում, բարձրացատկ և 400մ վազք:

Երկրորդ օրը մրցում են ևս 5 ձևում՝ 110 մ արգելավազք, սկավառակի նետում, ձողացատկ, նիզակի նետում և 1500 մ վազք:

Կանայք մրցում են յոթնամարտում. առաջին օրը՝ 100մ արգելավազք, բարձրացատկ, գնդի հրում և 200մ վազք: Երկրորդ օրը՝ հեռացատկ, նիզակի նետում և 800 մ վազք:

Վերոնշյալ բոլոր ձևերում ներառական կրթության ինտեգրումը ապահովելու համար հարկավոր են մեջ ջանքեր և մասնագիտական հմտություններ որոնք թույլ կտան կատարել ճիշտ աշխատանք որի արդյունքում ներառական կրթությունը կհամատեղի աթլետիկան և այն անձանց, ովքեր ընդգրկված են ներառական խմբերում:

Հետազոտելով ներառական կրթությության առկա վիճակը Հայաստանում մենք կհասկանանք ինչ մեծության խնդիրներ են մեզ սպասում, ներառական կրթության պայմաններում աթլետիկայի դասերի անցկացման համար:

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, որն ընդունվել է 1999 թվականին, «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»:[4] Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով: Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում

իրականացնելու ներառական կրթության ծրագրեր: 2001 թվականից «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներն իրականացնում են ներառական կրթություն: ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա 2000 թ. Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան 27-րդ միջնակարգ դպրոցում մեկնարկեց ներառական կրթության փորձնական ծրագիրը, իսկ 2001-2005 թթ. ընթացքում ներառական կրթություն իրականացվել է փորձնական կարգով 5 հանրակրթական դպրոցում: 2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Խորհրդային հասարակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հիմնականում կազմակերպվում էր գիշերօթիկ դպրոցներում: Հայաստանի կողմից ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային միանալուց հետո սկսվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը հանրապետությունում: Հանրակրթական համակարգին զուգընթաց հանրապետությունում ընթացել են նաև հատուկ կրթության (գիշերօթիկ դպրոցների) համակարգի բարեփոխումներ: Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ: Հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց: Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության

մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»: 2007 թվականից սկսած ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը: Այսօր Հայաստանի Հանրապետությունում 117 հանրակրթական դպրոցներ իրականացնում են ներառական կրթություն, այնտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը[3]: 2002 թ. հանրապետությունում գործում էին 52 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում էր շուրջ 10.000 երեխա: Այսօր հանրապետությունում գործում են 23 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում է շուրջ 2300 սովորող: Ե՛վ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, և՛ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը: Դա հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային պարտադրաբար ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և նրան ներառելով հանրակրթական ուսումնական հաստատություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական,

սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Այս իմաստով հատուկ հանրակրթական համակարգում ընթացող բարեփոխումներն առաջնահերթ են: 2007 թ. ստեղծվել է **Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը**: Այս կառույցի ստեղծման հիմնական նպատակն էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների բացահայտումը և նրանց դուրսբերումը հատուկ դպրոցներից, որը հաջողությամբ իրականացվեց: Անցած 5 տարիների ընթացքում գնահատման արդյունքների հիման վրա հատուկ դպրոցների 1-6-րդ դասարաններից դուրս են բերվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները, և կանխվել է նման երեխաների մուտքը հատուկ դպրոցներ: Արդյունքում՝ հատուկ դպրոցներում 2007 թ. սովորող շուրջ 5000 աշակերտի փոխարեն այսօր ունենք շուրջ 2300 աշակերտ: Զարգացումները գնահատման կենտրոնի առաջ դրեցին նոր մարտահրավերներ, այն է՝ երեխայի կրթական կարիքների գնահատում՝ արդյունավետ կրթության կազմակերպման նպատակով: Անհրաժեշտ է մշակել նոր չափանիշներ՝ հիմնված երեխայի ֆունկցիոնալ կարիքների վրա: Այդ պարագայում երեխայի անհատական ուսումնական պլաններն էլ կմշակվեն երեխայի իրական կրթական կարիքների գնահատման արդյունքում և կնպաստեն երեխայի զարգացմանը: Հաշմանդամության գնահատման այդպիսի միասնական մոդել է առաջարկում մշակել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ: Մոդելի մշակման համար ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ: Այսօր, համաձայն վիճակագրության, Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, իսկ հատուկ դպրոցներում՝ հատուկ հանրակրթական դպրոցներում՝ շուրջ 2300 երեխա: Փաստորեն, հանրապետության շուրջ 8000 հաշմանդամություն ունեցող երեխաներից ՀՀ ԿԳՆ տեսադաշտում են շուրջ 5000-ը:

Վերոնշյալ տեղեկությունները ունենալով հասկանում ենք, որ ասյպիսի մեծամաշտաբ աշատանք կարտարելու համար հարկավոր են հատուկ պայմաններ և հնարավորություններ ներառական խմբերում ընդգրկված անձանց հետ աթլետիկայով զբաղվելու համար:

Բացի այդ հարկավոր են համապատասխան փորձ ունեցող մասնագետներ որոնց օգնությամբ հնարավոր կլինի հաղթահարել այն պատնեշները որոնք չեն հանդիպում աթլետիկակայի առօրիայում: Դրանցից են հատուկ տեխնիկական զինվածությունը, օրինակ հաշմանդամություն ունեցող անձանց համար, որոնք ունեն ստորին վերջույթի հատուկ պրոթեզավորված վերջույթների ստեղծումը, որոնց օգությամբ անձը կարող է լիարժեք աշխատանք կատարել տարբեր վարժությունների ժամանակ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

Ներկայումս հաշմանդամության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն և պրակտիկայում կամա թե ակամա կիրառվում են երկու մոդելներ՝ բժշկական ու բարեգործական և սոցիալական, որոնցից յուրաքանչյուրը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչն է որոշիչ «հաշմանդամ» բառի մեջ: [3]

Բժշկական մոդել

Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հաշմանդամությունը համարվել է և համարվում է անձի խնդիրը, որը նշանակում է, որ հաշմանդամությունը «հիվանդություն» է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է, և, հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը: Այսինքն՝ եթե կենտրոնանանք միայն առողջական խնդիրների վրա և հաշմանդամություն ունեցող մարդուն դիտարկենք առաջին հերթին որպես հիվանդի, ապա նրա վիճակի բարելավմանն ուղղված գործողությունները կկրեն հիմնականում բժշկական և բարեգործական բնույթ (ֆիզիկական վերականգնում, բուժում, բարեգործական օգնություն): Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն

ունեցող մարդը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դառնում է «հիվանդ», «խնամյալ»: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները (խնամողը, ընտանիքը, հասարակությունը): Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա հիվանդ է և ունի հիմնականում բուժման, խնամքի և հոգածության կարիք: Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում է նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին Այսպիսով բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը, հատուկ խնամքին և աջակցությանը:

Սոցիալական մոդել

Չբացառելով հաշմանդամության բժշկական մոդելի կարևորությունը՝ հաշմանդամության սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել հավասար հնարավորություններ և լիարժեք մասնակցություն հասարակության բոլոր քաղաքացիների համար: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին և ներուժին: Ավելին, այս մոդելը կոչ է անում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի զարգացման գործընթացներին: Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առաջնային և կարևոր մասնակցություն ունենան իրենց խնդիրների լուծմանն ուղղված օրենքների, քաղաքականությունների, ռազմավարությունների և գործընթացների մշակմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը: Սոցիալական մոտեցման դեպքում հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակը բարելավելու գործողություններն ուղղված են այն բանին, որպեսզի վերացվեն բոլոր ներքին ու արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում են

հասարակության կյանքին նրանց ներգրավմանը: Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք: Այսպիսով, սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային և վերաբերմունքի, արգելքների/խոչընդոտների փոխազդեցության հետևանք: Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացմանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը:

Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը կազմում է ներառական կրթության առանցքը, քանի որ այն ենթադրում է՝ բոլոր երեխաների կրթական կարիքների հավասար գնահատում. դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին բոլոր երեխաների ներգրավվածության աստիճանի բարձրացում. կրթական քաղաքականության վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին. ուսումնական գործընթացներում առկա խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում. երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում.սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և հարգանք. դպրոցական պայմանների բարելավում. հասարակության ժողովրդավարական և մարդասիրական արժեհամակարգի ձևավորման գործում դպրոցների դերի կարևորում.կրթությունը որպես հասարակության մեջ բոլոր մարդկանց լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439 որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար: Ըստ այդ փաստաթղթի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը արդյունավետ կազմակերպելու

նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին: 2011 թվականից ՀՀ կառավարության հունվարի 27-ի N 46-Ն որոշմամբ «Հույսի կամուրջ» ՀԿ-ի և դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության հետ համատեղ Տավուշի մարզում իրականացվում է հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման ծրագիր, և ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը[7]:

ՀՀ Ազգային ժողովը 2012 թ. հոկտեմբերին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալական խարտիայի» պահանջներով, որոնց միանալով Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն միջազգային պարտավորություններով, այլև Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրով սահմանված ներառական կրթության ընդլայնման, հատուկ դպրոցների օպտիմալացման, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրման միտումով: Արդյունքում կունենանք երեխայի անհատական տարբերություններից ու հաշմանդամությունից անկախ՝ կրթության իրավունքի միասնական իրավական կարգավորում, որը կերաշխավորի բոլորի համար կրթության հավասարության իրավունքը:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ

կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության համակարգի զարգացում, բոլոր աշակերտների լիարժեք մասնակցություն, հավասար հնարավորությունների ստեղծում և անհատական մոտեցումներ:

Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևնույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք:

Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:

Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում:

Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:

Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ և գիտակից աշխատեն՝ ներառական կրթության նպատակներին հասնելու համար[8]:

Այսպիսով ներառական կրթության համար աթլետիկան հանդիսանում է գործից որի գօնությամբ հնարավոր է ինտեգրել անձանց սպորտում:

Աթլետիկական վարժությունները կիրառելով ներառական խմբի աշակերտների համար, նրանք կիմտանան հետևյալ վարժություններում՝ քայլք, վազք, ցատկեր, նետումներ և բազմամարտ, որոնք իրենց հերթին բաժանվում են շատ ձևերի և խմբերի:

Սկզբնական քայլերում հարկավոր է սովորեցնել քայլքի, վազքի, ցատկերի և նետումների տեխնիկապես ճիշտ կատարումը: Դա կնպաստի կեցվածքի ձևավորմանը և առողջության ամրապնդմանը:

Այնուհետ հարկավոր է անցնել ավելի բարդ վարժությունների որոնք կարող են նպաստել շարժումների համաձայնեցման, տարածության մեջ կողմնորոշման, կոորդինացիոն կարողությունների զարգացմանը: Ինչպես նաև աթլետիկական վարժությունները կարող են՝

- Նպաստել գնդակը նետելու, փոխանցելու և ընդունելու կարողությունների մշակմանը:

- Նպաստել արագաշարժությանը, դիմացկունությանը, ուժը, ճարպկությանը, ճկունությանը, զարգացմանը

- Կարողանա ճիշտ քայլել, վազել 20 մ, հավասարաչափ դանդաղ վազել 3 րոպե, տեղից հեռացատկել, բարձրացատկել, ցատկել ցատկապարանով, թենիսի գնդակը նետել նշանակետին, մեծ գնդակը նետել և բռնել:

Այսպիսով աթլետիկական դասեր անցկացնելը մեծ ազդեցություն կարող է թողնել ներառական խմբերում ընդգրկված անձանց համար: Այդ իսկ պատճառով այն ինտեգրելով ներառական կրթությունում կլինեն մենակ դրական կողմեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թեթև աթլետիկա (https://encyclopedia.am/pages.php?bId=1&hId=242)

2. Աթլետիկա (https://hy.wikipedia.org/wiki/Աթլետիկա)

3. Ներառական կրթություն (https://hy.wikipedia.org/wiki/Ներառական_կրթություն)

4. Հաշմանդամություն (https://hy.wikipedia.org/wiki/Հաշմանդամություն)

5. Ֆիզիկական կուլտուրայի ծրագիր (https://escs.am/files/files/2020-07-28/28ed94c3aa19c2ebcafd8b15cb889be6.pdf)

6. Ներառական կրթություն (https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu)

7. ներառական կրթության համակարգի ներդրման (http://www.irtek.am/views/act.aspx?aid=84127)

8.Ներառական կրթության ռազմավարություն (https://www.unicef.org/armenia/media/3501/file/Ներառական%20կրթության%20ռազմավարություններ.pdf?fbclid=IwAR1ve6aJ0VP-iLOapxp0aC-wbhy9kyG8tgCXGiDryi6huqrWF64f6HwUdcw)

9. Ներառական կրթության իրականացման գնահատում (https://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf)